



Համարը

Տիպը Որոշում

Սկզբնաղբյուրը Միասնական կայք 2020.08.24-

2020.09.06 Պաշտոնական

հրապարակման օրը 01.09.2020

Ընդունող մարմինը Վճռաբեկ դատարան

Ստորագրող մարմինը Նախագահող

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 18.09.2019

Տեսակը Հիմնական

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 18.09.2019

Ստորագրման ամսաթիվը 18.09.2019

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

Գապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ԹԻՎ ԵԱՔԴ/0172/11/17 ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԱՔԴ/0172/11/17
Նախագահող դատավոր՝ **Տ. Սահակյան**

ԵԱՔԴ/0172/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝

Լ. Թադևոսյանի

մասնակցությամբ դատավորներ՝

Հ. Ասատրյանի

Ս. Ավետիսյանի

Ե. Դանիելյանի

Ա. Պողոսյանի

Ս. Օհանյանի

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝

Մ. Մնացականյանի
Վ. Դոլմազյանի

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք. Երևանում

որոշագ դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ դիմողներ Ալբերտ Ասլանի Հակոբջանյանի և Գագիկ Դավիթի Կարապետյանի ներկայացուցիչ Ա. Չատինյանի, և դիմող Գագիկ Դավիթի Կարապետյանի վճարել բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ալբերտ Հակոբջանյանի և Գագիկ Կարապետյանի հաղորդումների հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2017 թվականի մայիսի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62209617 քրեական գործը: Նույն օրն Ա.Հակոբջանյանը և Գ.Կարապետյանը ճանաչվել են տուժողներ:

1.1. Գագիկ Կարապետյանի հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2017 թվականի մայիսի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի և 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62210417 քրեական գործը, որը նույն օրվա մեկ այլ որոշմամբ միացվել է թիվ 62209617 քրեական գործին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ս.Ավետիսյանը 2017 թվականի սեպտեմբերի 15-ին որոշում է կայացրել *Արսամ Ղազարյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով, *Սարգիս Այվազյանի* և *Արսամ Չոբջանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ և 341-րդ հոդվածներով, *Վալերի Հովհաննիսյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 309-րդ հոդվածներով, *Կարեն Միմոնյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309.1-րդ և 314-րդ հոդվածներով, *Արմեն Բարսեղյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309.1-րդ և 137-րդ հոդվածներով, *Մանվել Ասոյանի* և *Խաչիկ Ակոյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 309.1-րդ հոդվածներով, *Լևոն Պառապյանի* և *Էդուարդ Վերմիշյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 349-րդ հոդվածներով, *Հարություն Վարդյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով, *Ալբերտ Հակոբջանյանի* և *Գագիկ Կարապետյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին:

2. Վերոգրյալ որոշման դեմ դիմողներ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի ներկայացուցիչ Ա.Չատինյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ մերժվել է:

3. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան)՝ 2018 թվականի մարտի 7-ի որոշմամբ դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի և դիմող Գ.Կարապետյանի բողոքը մերժվել է:

4. Դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի և դիմող Գ.Կարապետյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մայիսի 31-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ վճարել բողոք են բերել դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանը և դիմող Գ.Կարապետյանը, որոնք Վճարել դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարել բողոքների պատասխան չի ներկայացվել:

Վճարել բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Տուժող Ա.Հակոբջանյանը 2017 թվականի մայիսի 3-ին ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ իր հիշելով 2016 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ հերթական անգամ գտնվել է Ստեփանավան քաղաքում, ժամը 09-ից 10-ի սահմաններում, Գ.Կարապետյանը, իրեն Ալավերդի քաղաք ճանապարհելու նպատակով, պատահական տաքսի ավտոմեքենայով ուղեկցել է Ստեփանավան քաղաքի ավտոկայան: Ճանապարհին 3-4 ավտոմեքենաներ, որոնցից հիշում է «Ֆոլկվագեն գոֆ», «BMW» և «Նիվա» մակնիշի ավտոմեքենաները, շրջափակել և կանգնեցրել են տաքսին:

Ավտոմեքենաներից իջել են մոտ 10 հոգի տղաներ, որոնք թեև չեն ներկայացել, սակայն նրանց մոտեցումից հասկացել են, որ ոստիկանության աշխատակիցներ են: Նրանցից «Ֆոլկվագեն գոֆ» մակնիշի ավտոմեքենայի վարորդն ատորճանակն ուղղել է դեպի տաքսի ավտոմեքենան և պահանջել դուրս գալ ավտոմեքենայից: Այդ գործողություններին զուգահեռ նրանք տաքսի ավտոմեքենայի դռները բացել, իրեն և Գ.Կարապետյանին քաշելով իջեցրել, վերջինիս ձեռքերը դեպի ետ ոլորելով տարել են մի կողմ, իսկ իր ձեռքերը դեպի ետ ոլորելով ձեռնաշղթաներ են հագցրել և նստեցրել «Ֆոլկվագեն գոֆ» մակնիշի ավտոմեքենայի ետնամասում: Առանց պատճառը հայտնելու, թվով 4 աշխատակիցներ իրեն բերման են ենթարկել ոստիկանության Ստեփանավանի բաժին, տարել 2-րդ հարկում գտնվող աշխատասենյակներից մեկը: Իր ձեռնաշղթաները հանելուց հետո քրեական հետախուզության բաժնի պետը հարցրել է, թե որտեղից է Գ.Կարապետյանի հետ գողություն կատարել: Երբ ինքը պատասխանել է, որ գողություն չի կատարել, Վ.Հովհաննիսյանն աջ ձեռքով ուժգին ապտակել և

հայիոյէ է՝ պահանջելով խոստովանել Գ. Կարապետյանի հետ գողութիւն կատարելու հանգամանքը: Ինքը կրկին պատասխանել է, որ որևէ մեկի հետ գողութիւն չի կատարել, որից հետո մոտ 5 րոպէ տևողությամբ, ընդմիջումներով, աշխատասենյակում գտնվող ոստիկանները սկսել են անկանոն ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցնել իր մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ և ֆիզիկական ուժեղ ցավ՝:

6.1. Տուժող Գ. Կարապետյանը 2017 թվականի մայիսի 4-ին տուժող Ա. Հակոբջանյանի ցուցմունքին մասամբ նույնաբովանդակ ցուցմունք է տվել՝ ըստ էության հավելելով նաև, որ Ա. Հակոբջանյանին բերման ենթարկելուց քիչ հետո գնացել է այնտեղ, ցանկացել ներս մտնել, սակայն հերթապահ մասի աշխատակիցը թույլ չի տվել: Շուրջ 4-5 ժամ սպասել է ընկերոջը, տեսնելով, որ բաց չեն թողնում, կրկին փորձել է մուտք գործել բաժին, և քանի որ կրկին թույլ չեն տվել, վիճաբանության է բռնվել այնտեղ գտնվող աշխատակիցների հետ, որի ընթացքում հայիոյէ է և քաշքշել են միմյանց, քրեական հետախուզության բաժնի պետ Վ. Հովհաննիսյանը ապտակել է, աշխատակիցներից մեկն ատրճանակով սպանության սպառնալիք է տվել: Այնուհետև բարձրացել է բաժին, իրեն ուղեկցել են պետի տեղակալ Ա. Չոյջանի աշխատասենյակ, ով մեկ անգամ ապտակել է՝ պատճառելով ֆիզիկական ցավ՝:

7. ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի աշխատակիցներ Կարեն Միմոնյանը և Արմեն Իսրայելյանը ցուցմունք են տվել այն մասին, որ 2016 թվականի հուլիս ամսին Ստեփանավան քաղաքում կատարված գողության դեպքով ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տվյալներ էին ձեռք բերվել, որ այդ գողությունը հնարավոր է կատարած լինի նախկինում գողության համար դատապարտված Գագիկ Կարապետյանի ընկեր Ալբերտ Հակոբջանյանը: 2016 թվականի օգոստոսի սկզբներին, օրը հստակ չեն հիշում, տեղեկացել են նաև, որ Ալբերտը գտնվում է Գագիկ Կարապետյանի տանը: Քրեական հետախուզության բաժանմունքի պետ Վալերի Հովհաննիսյանի հանձնարարությամբ նրան գողություն կատարելու կասկածանքով պետք է բերման ենթարկելին ոստիկանության Ստեփանավանի բաժին: Հնարավոր կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելու նպատակով, որոշել են Ա. Հակոբջանյանին բերման ենթարկել Գագիկի բնակարանից դուրս գալուց հետո: 2016 թվականի օգոստոս ամսվա սկզբներին, օրը հստակ չեն հիշում, երբ Ա. Իսրայելյանի հետ վերջինիս «Ֆոլկլավագեն վենտո» մակնիշի ավտոմեքենայով գտնվում էին քաղաքում, տեսել են, որ Ալբերտն ու Գագիկը վերջինիս բնակության վայրից դուրս եկան, նստեցին ինչ-որ «Ֆոլկլավագեն գոլֆ» մակնիշի ավտոմեքենա: Որքան հիշում են, իրենք այդ մասին հեռախոսազանգով տեղեկացրել են Վ. Հովհաննիսյանին, ով ասել է, որ կմոտենա: Երբ տաքսին հեռացել է Գագիկենց շենքի մոտից և հասել էին, իրենց հիշելով Ստեփանավան քաղաքի Մեղապարտ և Սուրբ Նշան փողոցների խաչմերուկի մոտ, ազդանշան տալով կանգնեցրել են տաքսի ավտոմեքենան: Իջել են ավտոմեքենայից, մոտեցել տաքսուն, այդ ժամանակ հասել է նաև Վ. Հովհաննիսյանը և նրանց ներկայանալով որպես ոստիկանության Ստեփանավանի բաժնի աշխատակիցներ՝ Ա. Հակոբջանյանին պահանջել են իջնել տաքսի ավտոմեքենայից: Վերջինս, առանց խնդիրներ առաջացնելու իջել է, իսկ առջևում գտնվող ուղևոր Գագիկ Կարապետյանը սկսել է բղավել և դժգոհություններ հայտնել՝ ասելով, թե ինչ են ուզում իր ընկերոջից, ինչու են նրան բաժին բերման ենթարկում: Վ. Հովհաննիսյանը փորձել է նրան կարգի հրավիրել՝ ասելով, որ իրենց աշխատանքն են իրականացնում և կարիք չկա նման վարքագիծ դրսևորել և ասել է, որ կարող է գնալ: Իրենց ավտոմեքենայով Ա. Հակոբջանյանին բերման են ենթարկել ոստիկանության Ստեփանավանի բաժին: Որքանով տեղյակ են, բաժնի աշխատակիցներից ոչ ոք, իսկ քրեական հետախուզության բաժնում առավելապես, «Ֆոլկլավագեն գոլֆ», կամ հին տարեթվի «BMW» մակնիշի ավտոմեքենաներ ունեցողներ չկան: Արմեն Իսրայելյանին պատկանող կանաչ գույնի «Ֆոլկլավագեն վենտո» մակնիշի ավտոմեքենայով Ա. Հակոբջանյանին բերման են ենթարկել ոստիկանություն, «Ֆոլկլավագեն գոլֆ» կամ «BMW» մակնիշի ավտոմեքենաներով չեն եղել, իսկ Վալերի Հովհաննիսյանն ընդամենը այդ գործողություններին ներկա է գտնվել և այնտեղ է եկել իր «Նիվա» ավտոմեքենայով՝:

ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի մյուս աշխատակիցների կողմից «Ֆոլկլավագեն գոլֆ» կամ «BMW» մակնիշի ավտոմեքենաներ չունենալու առնչությամբ նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի մյուս աշխատակիցները:

7.1. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալի՝ 2016 թվականի օգոստոսի 5-ի ծառայողական ուսումնասիրության եզրակացության համաձայն՝ նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնի քրեական հետախուզության բաժնի ծառայողներ Կ. Միմոնյանը և Ա. Իսրայելյանը նույնաբովանդակ բացատրություններ են տվել այն մասին, որ 2016 թվականի օգոստոսի 4-ին առավոտյան Ա. Հակոբջանյանին հրավիրել են ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժին, սակայն վերջինս առանց որևէ պատճառաբանության հրաժարվել է ներկայանալ նախաքննություն իրականացնող մարմին և նույն օրը ժամը՝ 15:45-ին Ստեփանավան քաղաքի Հ. Մեղապարտի և Սուրբ-Նշան փողոցների խաչմերուկից իրենք Ա. Հակոբջանյանին բերել են ոստիկանության Ստեփանավանի բաժին՝:

8. Ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետ Ս. Այվազյանը Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետին ուղղված 2016 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 63/2-5245 գրությամբ խնդրել է, որպեսզի թույլատրեն իրեն և Լոռու մարզային վարչության պետ Ա. Ղազարյանին 2016 թվականի դեկտեմբերի 1-ին Գ. Կարապետյանի հետ «Օ՝ բնոյթի հարցազրույց» ունենալու նպատակով մուտք գործել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի ձեռքարկվածների պահման վայր (այսուհետ նաև՝ ՁՊՎ)⁵: Նշված գրությանն ի պատասխան՝ ավագ քննիչ Լ. Պառավյանի՝ նույն օրվա թիվ 53³-3025-16 գրությամբ թույլատրվել է Գ. Կարապետյանի հետ իրականացնել «Օ՝ միջոցառումներ»⁶: Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա. Ղազարյանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 57/3-3221 գրության համաձայն՝ 2016 թվականի դեկտեմբերի 1-ին ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնի պետ Ս. Այվազյանի հետ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի ՁՊՎ-

ում տեսակցել են Գագիկ Կարապետյանին, որտեղ Ս.Այվազյանը Գ. Կարապետյանի նկատմամբ իրականացրել է «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն⁷:

8.1. Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Ղազարյանն ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ բնակարանային գողություն կատարելու կասկածանքով, ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի կողմից ձերբակալված Գ. Կարապետյանի կողմից հնարավոր այլ գողություններ կատարելու հանգամանքը պարզելու նպատակով, վերջինիս հետ օպերատիվ հարցազրույցներ ունենալու համար՝ 2016 թվականի դեկտեմբեր ամսվա սկզբներին, համապատասխան թույլտվությամբ ինքն ու ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետ Ս.Այվազյանը մուտք են գործել ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ և հարցազրույց ունեցել Գ. Կարապետյանի հետ: Հարցեր են տվել ինչպես տվյալ գողության դեպքի, այնպես էլ հնարավոր այլ գողություններ կատարելու վերաբերյալ: Ոչ ինքը, ոչ էլ Ս.Այվազյանը նրան չեն առաջարկել որոշակի գումարի դիմաց գողության 3 դեպք ընդունել: Առհասարակ իրենց միջև նման բովանդակությամբ խոսակցություններ չեն եղել⁸:

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետ Ս.Այվազյանը⁹:

9. Ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի պետի՝ 2016 թվականի նոյեմբերի 30-ի գրությամբ կից «իրազեկման» համաձայն՝ ձերբակալված Գ. Կարապետյանը գանգատվում էր գլխացավերից, ականջների շրջանում այրոցի զգացողությունից, ինչի կապակցությամբ բժշկական կենտրոնից հրավիրվել է բժիշկ, որն էլ իր հերթին բուժզննության է ենթարկել ձերբակալվածին, ցուցաբերել է առաջին բուժօգնություն և նշում կատարել ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության՝ «Ձև 12» գրանցամատյանում¹⁰:

9.1. Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի պետ Ս.Ավետիսյանի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի գրության համաձայն՝ ձերբակալված Գ. Կարապետյանը ՁՊՎ ընդունվելուց հետո՝ դեկտեմբերի 1-ին ժամը 00:25-ին, բողոք է հայտնել գլխացավից, մարմնի ընդհանուր թուլությունից, ինչի կապակցությամբ հրավիրվել է շտապօգնության բրիգադ, որի կողմից ցուցաբերվել է առաջին բուժօգնություն¹¹:

9.2. Ըստ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության գրանցման մատյանի տվյալների. «Կարապետյան Գագիկ Դավիթի, 01.12.2016 թվական, ժամը 24:25, զանգատվում է ընդհանուր թուլությունից, գլխացավից, վերին վերջույթում թմրածության զգացողությունից, սրտի շրջանում ծակող բնույթի ցավերից: Օբյեկտիվ մաշկը և տեսանելի լորձաթաղանթները նորմալ գունավորման, սրտի տոները ռիթմիկ, պուլսը ռիթմիկ, լեցուն, թոքերում կոշտ շնչառություն, պուլսը 86գ/ր, գ/ն-130/80մմ.սս.: Ախտորոշում՝ վեգետատիվ կրիզ, անհրաժեշտ է նյարդաբանի կոնսուլտացիա: Բժիշկ-ստորագրություն: Գրառում ստ 02.12.2016 թվական ժամը 10:10 զանգատվում է սրտի շրջանի ծակող սուր ցավերից, որոնք տարածվում են ձախ ուսին, շնչարգելությունից, գ/ն-130/80մմ.սս., ախտորոշում՝ վեգետատիվ կրիզ, կատարվել է անալգին, դիմեդրոլ: ՇԲՈ-հերթապահ բժիշկ՝ Ս.Սերոբյան»¹²:

10. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ս.Ավետիսյանի՝ թիվ 62209617 քրեական գործով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ 2017 թվականի մայիսի 11-ի հանձնարարության համաձայն՝ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությանը հանձնարարվել է ձեռնարկել օպերատիվ միջոցառումներ՝ պարզելու քրեական գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ¹³:

10.1. ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Ս.Ասատրյանի՝ 2017 թվականի հունիսի 15-ի գրության համաձայն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ս.Ավետիսյանի՝ թիվ 62209617 քրեական գործով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին տրված հանձնարարությամբ արժարժված հարցերի շուրջ ձեռնարկված միջոցառումների արդյունքում, ի թիվս այլնի, պարզվել է, որ Ա.Հակոբջանյանի և Գ. Կարապետյանի նկատմամբ 2016 թվականի օգոստոսի 4-ին բռնություն չի գործադրվել, Ա.Հակոբջանյանին և Գ. Կարապետյանին ուղեկցող տաքսու վարորդը հանդիսացել է Ստեփանավան քաղաքի Պրոմեթևս 15Ա/5 հասցեի բնակիչ, 1992 թվականի մարտի 23-ին ծնված Նարեկ Սամվելի Բարխուդարյանը, ով բացակայում է ՀՀ-ից և գտնվում է ՌԴ-ում¹⁴:

10.2. ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալ Վ.Հովսեփյանի՝ 2017 թվականի ապրիլի 28-ի գրության համաձայն՝ Նարեկ Բարխուդարյանը 2016 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 14:28-ին Բագրատաշենի սահմանային անցակետով մեկնել է ՀՀ-ից¹⁵:

10.3. ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալի՝ 2017 թվականի հուլիսի 17-ի գրության համաձայն՝ 2017 թվականի մայիսի 3-ից մինչև 2017 թվականի հուլիսի 13-ն ընկած ժամանակահատվածում Ալբերտ Հակոբջանյան (ծնված՝ 28.07.1970թ-ին) տվյալներով անձի կողմից ՀՀ պետական սահմանը հատելու վերաբերյալ ՍԷԿՏ համակարգում տեղեկություններ չկան¹⁶:

10.4. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ս.Ավետիսյանի կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություններ է տրվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնին, ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությանը, ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությանը՝ պարզելու Ա.Հակոբջանյանի փաստացի բնակության հասցեն և նրան հայտնաբերելու դեպքում պարտավորեցնելու ներկայանալ ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որոնց արդյունքներով Ա.Հակոբջանյանը չի հայտնաբերվել¹⁷:

11. Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2017 թվականի

սեպտեմբերի 15-ի որոշումը պատճառաբանվել է հետևյալ կերպ. «(...) Նախաքննության ընթացքում կատարվել են հնարավոր բոլոր քննչական ու դատավարական գործողությունները և սպառվել են նոր սպացույցներ ձեռք բերելու հնարավորությունները, իսկ << քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված, հավաստի սպացույցների բավարար ամբողջությամբ: Մեղադրանքն սպացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարստվել << քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

(...) Արբերտ Հակոբջանյանի և Գագիկ Կարապետյանի հայտնած տեղեկությունները՝ ոստիկանության Ստեփանավանի բաժնի աշխատակիցների կողմից իրենց նկատմամբ բռնություն գործադրելու, հսցողելու և սպառնալիքներ տալու, Ա.Հակոբջանյանին առաջադրված ժամի բերման ենթարկելու, սակայն նրան սպօրինի ազատությունից զրկելու և բերման ենթարկելու մասին կազմված արձանագրությունում ժամը 15:45-ն արձանագրելու, Գագիկ Կարապետյանին սպանության սպառնալիք տալու, Հարություն Վարույանին ցուցմունք տալուն հարկադրելու, վերջինիցս գումար պահանջելու, Ստեփանավանի քննչական բաժնի քննիչների կողմից վկային և տուժողին ցուցմունք տալուն հարկադրելու, պաշտոնեական կեղծիք կատարելու կամ սպացույց կեղծելու վերաբերյալ, կատարված նախաքննության ընթացքում բացի շահագրգիռ անձանց ցուցմունքներից, այլ սպացույցներով չեն հաստատվել, հետևաբար, չփարստված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ պաշտոնատար անձանց: (...)»¹⁸:

12. << գլխավոր դատախազի տեղակալի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ մերժվել է դիմողների ներկայացուցիչ Ա.Չառինյանի բողոքը՝ արձանագրելով, ի թիվս այլնի, հետևյալը. «(...) Քրեական գործի նախաքննության ընթացքում, բացի քրեական գործով շահագրգռված Գագիկ Կարապետյանի և Արբերտ Հակոբջանյանի ցուցմունքներից, այլ փաստական տվյալներ ձեռք չեն բերվել, միաժամանակ սպառվել են նոր սպացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները: Նման պայմաններում առկա է չփարստված կասկած, որպիսի կասկածն անմեղության կանխավարկածի սկզբունքի ուժով ենթակա է մեկնաբանման հօգուտ << ոստիկանության Ստեփանավանի բաժնի (...) պաշտոնատար անձանց (...)»¹⁹:

13. Առաջին ստյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի որոշման համաձայն՝ «(...) թիվ 62209617 քրեական գործի վարույթի շրջանակներում իրականացվել է արդյունավետ քննություն, քննչական և դատավարական գործողությունները քննիչի կողմից կատարվել են օրենքով սահմանված քրեադատավարական ընթացակարգին համապատասխան և կայացվել է օրինական և հիմնավոր որոշում:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ << հատուկ քննչական ծառայության ՀԳԳ քննիչ Ս.Ավետիսյանի՝ «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու» 15.09.2017թ. որոշումն օրինական է և հիմնավորված, իսկ բողոքում բերված փաստարկները հիմնավոր չեն, ուստի բողոքը ենթակա է մերժման: (...)»²⁰:

14. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի մայիսի 31-ի որոշմամբ փաստել է. «(...) [Վ]արույթն իրականացնող մարմնի կողմից պահպանվել են << քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն կատարելու պահանջները, մասնավորապես գործով իրականացվել են մի շարք քննչական ու դատավարական գործողություններ՝ արդյունքում կայացնելով օրինական և հիմնավոր որոշում (...)»²¹:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

15. Բողոքների հեղինակների պնդմամբ՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի իրականացվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, չեն կատարվել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված կլինեին հանցագործությունը և մեղավորներին բացահայտելուն, ինչն էլ իր հերթին հանգեցրել է տուժողների իրավունքների և ազատությունների խախտման:

Վարույթն իրականացնող մարմինը ձեռքի տակ ունենալով երկու անձի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման մասին տվյալներ, դրանց համարժեք գնահատական չի տվել, չի կատարել արդյունավետ քննություն:

16. Մասնավորապես, ըստ բողոքաբերների՝ վարույթն իրականացնող մարմինը միջոցներ չի ձեռնարկել Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի հայտնած տեղեկատվության հիման վրա գտնելու և հարցաքննելու տաքսի ավտոմեքենայի վարորդին, ով դեպքի օրն ակամատես է եղել ոստիկանության աշխատակիցների կողմից Ա.Հակոբջանյանի ու Գ.Կարապետյանի նկատմամբ բռնություն գործադրելու, այնուհետև բերման ենթարկելու ողջ ընթացքին:

Ըստ բողոքների հեղինակների՝ ստորադաս դատարանների կողմից իրավական գնահատականի չի արժանացել այն հանգամանքը, թե արդյո՞ք օրինական էր ոստիկանության Լոռու մարզային վարչության պետի և ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետի մուտքը ոստիկանության Տարոնի բաժին: Չի քննարկվել նաև այն հարցը, թե արդյո՞ք նշված անձինք իրավունք ունեին մուտք գործել ձեռքարկված և կալանավորված անձանց պահման վայր:

17. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք խնդրել են բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշումը՝ վերացնելով դիմողների իրավունքների խախտումները կամ գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումը վերացնելու սահմանադրական գործառնության իրացումն է: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու «վստահելի հայտարարության» կամ «վիճելի բողոքի» կամ այլ բավարար չափով որոշակի նշանների առկայության դեպքում կատարվող քննության արդյունավետության չափանիշի վերաբերյալ արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են նպաստել նաև այդ կապակցությամբ ձևավորված իրավունքի զարգացմանը:

19. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ Ա. Հակոբջանյանի և Գ. Կարապետյանի հաղորդումների հիման վրա իրականացված քննությունը եղել է արդյունավետ:

20. ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, աննարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ աննարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:*

20.1. Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչի՝ արդյունավետ քննության մասով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դիրքորոշումներում բազմիցս ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից պետության պոզիտիվ պարտականությունն է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության իրականացումը²²: Դատարանը շեշտել է, որ այդ մասին վկայող բողոքների քննությունը պետք է լինի մանրակրկիտ և ամբողջական: Իրավասու մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր քայլերը՝ կատարվածի հետ կապված ապացույցների ամրագրման համար²³:

20.2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդդեմ Հայաստանի կայացված մի շարք վճիռներում արձանագրվել է, որ պետությունն իր պոզիտիվ պարտականության շրջանակներում չի կատարել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն, ինչը հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչի խախտման²⁴: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ քննությունը չի իրականացվել անհրաժեշտ անհապաղությամբ, ապացույցները ձեռք են բերվել, բժշկական զննություններն իրականացվել են ենթադրյալ վատ վերաբերմունքից հետո տևական ժամանակ անց, ինչը հանգեցրել է կարևոր ապացուցողական տվյալների կորստի²⁵:

20.3. *«Խոշտանգումների և այլ դաժան, աննարդկային կամ արժանապատիությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ»* ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) պետություն[ն] սպաստվում է, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ և անաչառ քննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, որ խոշտանգում է կիրառվել իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում»:*

Նույն կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) պետություն[ն] սպաստվում է, որ ցանկացած անձ, ով պնդում է, թե ինքն այդ պետության իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում ենթարկվել է խոշտանգումների, ունենա սոխյալ պետության իրավասու մարմիններին բողոք ներկայացնելու և նրանց կողմից իր գործի անհապաղ ու անաչառ քննության իրավունք (...):»:*

20.4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի (...):»:*

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար (...):»:*

21. Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում մշտապես ընդգծել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի բացարձակ բնույթը²⁶: Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորված մոտեցումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը: Մասնավորապես, արձանագրվել է, որ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու «վիճելի բողոքի» կամ «վստահելի հայտարարության» կամ այլ բավարար չափով որոշակի նշանների²⁷ առկայության դեպքում ծագում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ կատարելու քննություն, որի արդյունավետությունն ապահովվելու համար այն պետք է համապատասխանի որոշակի չափանիշների: Այսպես, *Վարդգեզ Գասպարիի* վերաբերյալ կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ խոշտանգումների վերաբերյալ գործերով արդյունավետ քննություն կատարելու չափանիշներն են.

- ա) քննություն իրականացնող մարմինների անկախությունը և անաչառությունը²⁸,
- բ) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ արագությամբ²⁹,
- գ) քննություն իրականացնող մարմինները պետք է օժտված լինեն համապատասխան փաստերը հաստատելու, մեղավոր անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու լիարժեք իրավասությամբ³⁰,

դ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներն ապահովելու համար³¹,
ե) պետք է ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը և տուժողի արդյունավետ ներգրավվածությունը քննությանը³²:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է նաև, որ քննություն կատարելու պետության պոզիտիվ պարտականությունը ենթադրում է, որ քննությունը պետք է լինի արագ և մանրամասն: Դա նշանակում է, որ տեղի ունեցածը բացահայտելու նպատակով իրավասու մարմինները պետք է իրականացնեն լուրջ ջանքեր և քննությունն ավարտելիս կամ իրենց որոշումները պատճառաբանելիս չհենվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված եզրահանգումների վրա³³: Նրանք պետք է կատարեն իրենց համար հատու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ակնատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները³⁴: Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը³⁵:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հաշվի առնելով քննության մանրամասն լինելու չափանիշին համապատասխանելու համար անհրաժեշտ դատավարական գործողությունների սպառիչ սահմանման անհնարինությունը, որպես այդպիսի քննության չափանիշներ են հանդիսանում «լուրջ ջանքեր գործադրելը» կամ «բոլոր ողջամիտ քայլերն իրականացնելը»³⁶:

22. Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ արդյունավետ քննություն կատարելու անհրաժեշտությանն անդրադարձ է կատարել նաև Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ ՄԻՊ)՝ որպես ազգային կանխարգելման մեխանիզմի գործունեության վերաբերյալ վերջին տարիներին հրապարակվող տարեկան զեկույցներում: Մասնավորապես, ՄԻՊ-ը նշել է, որ հաշվի առնելով Հայաստանի դեմ մի շարք գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռները, ինչպես նաև խոշտանգման դեպքերի քննության վիճակագրական տվյալները՝ խոշտանգման դեպքերում պետության պոզիտիվ պարտականության ապահովման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի խոշտանգման դեպքերի արդյունավետ քննությունը³⁷: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և վերջինիս խոցելիությունն ու իրավունքների չափափակման ռիսկն ավելի մեծ է հենց գործի քննության սկզբնական փուլում: Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում իրականացված ուսումնասիրության արդյունքում կատարված դիտարկման համաձայն՝ անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և վերջինիս խոցելիությունն ու իրավունքների չափափակման ռիսկի գործոնը մեծ է հանցանքի կատարման մեջ կասկածվող անձին արգելանքի վերցնելու ժամանակահատվածում³⁸: Նշվածն արձանագրել է նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն՝ Հայաստանի վերաբերյալ 4-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներում և իր մտահոգությունը հայտնել անձին արգելանքի վերցնելիս խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու պնդումների առնչությամբ³⁹:

Մինևույն ժամանակ, Խոշտանգումների դեմ կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում հայտնել է, որ Հայաստանում խոշտանգման և վատ վերաբերմունքի ենթարկվելու դեպքերի քննության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է՝

- ա) ապահովել խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթադրյալ զոհերի օպերատիվ բժշկական զննումը, որպեսզի ճշգրիտ արձանագրվեն նրանց վնասվածքները և ստացվեն կարևոր ապացույցներ՝ հետագա քննության համար,
- բ) ենթադրյալ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի քննության նպատակահարմարությունը որոշելիս ապահովել ապացուցման վերաբերելի և ողջամիտ չափորոշիչներ,
- գ) ամրապնդել կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարին ուղղված միջոցառումները, որոնք կարող են խոչընդոտել արդյունավետ քննությանը, հետապնդմանը և պատժմանը՝ կապված խոշտանգման և վատ վերաբերմունքի գործողությունների հետ,
- դ) ամրապնդել Հատուկ քննչական ծառայության քննչական կարողություններն ու անկախությունը՝ ապահովելու համար, որ անհապաղ իրեն տրամադրվեն խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ բոլոր բողոքները, ներառյալ ազատությունից զրկված անձանց նման պնդումները, և որ բոլոր պնդումները խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ օպերատիվ, անաչառ, մանրակրկիտ և արդյունավետ քննվեն, իսկ դրանց կատարման մեջ կասկածվողները պատշաճ կերպով ներկայացվեն դատարան, և նրանց մեղավորությունը հաստատվելու դեպքում պատժվեն իրենց գործողությունների ծանրությանը համաչափ ձևով, և որ Հատուկ քննչական ծառայությունը հրապարակավ տեղեկություններ հաղորդի ոչ միայն հարուցված քրեական գործերի, այլև հետապնդման արդյունքի մասին,
- ե) առանց վտանգելու անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ ապահովել, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դրսևորման համար քննության ներքո գտնվող բոլոր անձանց պարտականությունների կատարումը քննության ընթացքում անմիջապես կասեցվի⁴⁰:

23. Սույն որոշման 20-22-րդ կետերում վկայակոչված դրույթների և մեջբերված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկին ընդգծում է խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելիչ բացարձակ բնույթը և վկայակոչված միջազգային չափանիշների հաշվառմամբ կարևորում խոշտանգումների և վատ վերաբերմունքի ենթարկվելու մասին «վստահելի հայտարարության» կամ «վիճելի բողոքի» կամ այլ բավարար չափով որոշակի նշանների առկայության դեպքում իրականացվող քննության արդյունավետությունը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ

դեպքերի քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունը մեծապես պայմանավորված են վարույթն իրականացնող մարմնի օպերատիվությամբ: Մասնավորապես, «տաք հետքերով» տարվող քննության մեթոդիկայի կիրառմամբ անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում «լուրջ միջոցներ» ձեռնարկել կազմակերպելու համար՝

ա) ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկված գոհի անկախ բժշկական գննությունը և վերաբերելի ժամանակահատվածի բժշկական անամնեզի⁴¹ հավաքագրումը, քրեակատարողական հիմնարկում կամ ԶՊՎ-ում և դրանից դուրս նրա վերաբերյալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից կազմված գննության արձանագրությունների և բժշկական այլ փաստաթղթերի ձեռքբերումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դատաբժշկական փորձաքննության նշանակումը,

բ) ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքի մասին ուղղակի կամ անուղղակի տեղեկություններ ունեցող՝ դեպքի վայրում գտնված, բժշկական օգնություն կամ իրավաբանական օգնություն ցույց տված անձանց կամ վերաբերելի ժամանակահատվածում ենթադրյալ գոհի հետ շփում ունեցած, արգելանքի տակ պահելու վայր նրան ուղեկցած անձանց հնարավորինս սեղմ ժամկետում հարցաքննությունը⁴²: Այս համատեքստում, Վճռաբեկ դատարանը հատկապես կարևոր է համարում ընդգծել ակնատես վկաների հարցաքննության ապահովումը և անհրաժեշտ տվյալների ձեռքբերումը: Այդ վկաների հաղորդած տվյալները գործի ելքի համար կարող են ունենալ վճռորոշ նշանակություն և հնարավորություն տալ ստուգելու ինչպես ենթադրյալ գոհի, այնպես էլ ենթադրյալ ռոնձգոյություն կատարած անձի հայտնած տվյալները: Վերոգրյալի շրջանակներում Վճռաբեկ դատարանը նաև կարևոր է համարում նշել, որ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերով քննության արդյունավետության ցուցիչ է նաև այն, որ այդ գործերով վերջնական որոշումները չհիմնվեն բացառապես ենթադրյալ ռոնձգոյություն կատարած անձանց ցուցմունքների վրա և վերջիններս անվերապահ հիմք չընդունվեն ենթադրյալ գոհի հայտնած տվյալները հերքելու համար: Նշված գործերով յուրաքանչյուր ողջամիտ հնարավորության օգտագործմամբ անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել՝ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի իրադարձություններում ներգրավված անձանց ցուցմունքների արժանահավատությունը ստուգելու համար⁴³,

գ) ըստ ենթադրյալ գոհի՝ խոշտանգում կատարած կամ վատ վերաբերմունք դրսևորած անձանց մեկուսացումը՝ նվազագույնի հասցնելով նրանց կողմից իրենց ցուցմունքները միայնակ հետ համաձայնեցնելու հնարավորությունը: Օրինակ՝ *Ramsahai and others v. Netherlands* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ գործով անցնող ոստիկանները չեն պահվել մեկուսի և չեն հարցաքննվել երեք օր, որպիսի պայմաններում թեև չկա որևէ ապացույց այն մասին, որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միայնակ կամ Ամստերդամի ոստիկանական ուժերի իրենց գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախնական քննության պատշաճության ապահովման էական թերություն⁴⁴: Նշվածի համատեքստում, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ինչպես ենթադրաբար խոշտանգում կատարած կամ վատ վերաբերմունք դրսևորած անձանց մեկուսացումը, այնպես էլ խոշտանգում կատարելու կամ վատ վերաբերմունք դրսևորելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց նկատմամբ պաշտոնավարման ժամանակավոր դադարեցում դատավարական հարկադրանքի միջոցի կիրառումը՝ բացառելով նրանց կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունը,

դ) այլ ապացույցների հավաքումը, որոնք հնարավորություն կտան լիարժեք պատկերացում կազմել ենթադրյալ գոհի՝ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ փաստարկված հայտարարությունների կապակցությամբ: Այս առումով հատկանշական կարող է լինել անձին բերման ենթարկելու կամ նրան արգելանքի տակ պահելու վայրերի տեսաձայնագրությունների առգրավումը: Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի քննության արդյունավետության տեսանկյունից այդ ապացույցների կարևորությունն ընդգծել է նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն⁴⁵:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու գործերով քննություն իրականացնող մարմինները պետք է գործեն արդյունավետ, կատարեն մանրամասն քննություն՝ ձեռնպահ մնալով ենթադրյալ գոհի հայտնած տվյալները հասցնելու կամ չհիմնավորված վերջնական գնահատականի արժանացնելուց: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ քննություն իրականացնելու պարտականությունը «ոչ թե արդյունքի պարտականություն է, այլ՝ միջոցների»։ պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ ավարտվի այն եզրակացությամբ, որը համապատասխանում է դիմումատուի նշած դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը, և հայտարարությունների արժանահավատությունը հաստատվելու դեպքում, այն նաև պետք է հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանն ու հիմնավորելու դեպքում՝ նրանց պատժելուն⁴⁶: Այսինքն՝ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի գործերով առանցքային նշանակություն ունի ոչ թե ենթադրյալ գոհի կողմից ներկայացված տեղեկատվության հաստատումը, այլ այդ տեղեկատվության մանրամասն պարզման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների համալիրը, որն օբյեկտիվ դիտորդի մոտ համոզիչ կերպով հնարավորություն կընձեռի լիարժեք պատկերացում կազմել դեպքի հանգամանքների վերաբերյալ: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ իրականացված քննության նկատմամբ վստահության առկայության հիմնական պայմաններից է նաև քննությունն իրականացնող մարմինների ինստիտուցիոնալ և գործառնության անկախությունն ու անաչառությունը՝ գործնական իմաստով⁴⁷: Օրինակ՝ *Nalbandyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել էր, որ պետական մարմինները ներգրավվել էին քննելու միևնույն դատախազության աշխատակիցների և տեղական ոստիկանության բաժնի նրանց ենթակաների գործողությունները,

որպիսի քննությունը դատարանը չէր կարողացել համարել անկախության և անկողմնակալության պահանջներին բավարարող⁴⁸: Այսինքն՝ անհրաժեշտ է նաև պատշաճ ուշադրության արժանացնել գործի քննության մեջ ներգրավված մարմինների անկախության և անաչառության ապահովումը՝ միջոցներ ձեռնարկելով բացառելու գերատեսչական շահերի հնարավոր բախումները:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերով վերը նշված պահանջներին համապատասխանող քննությունը կարող է համարվել արդյունավետ և համահունչ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչին:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- քրեական գործի վարույթը նախաքննության մարմնի որոշմամբ կարճվել է և քրեական հետապնդում չի իրականացվել այն պատճառաբանությամբ, որ նախաքննության ընթացքում կատարվել են հնարավոր բոլոր քննչական ու դատավարական գործողությունները և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները⁴⁹,

- ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը մերժել է դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի բողոքն այն պատճառաբանությամբ, որ քրեական գործի նախաքննության ընթացքում, բացի քրեական գործով շահագրգռված Գ.Կարապետյանի և Ա.Հակոբջանյանի ցուցմունքներից, այլ փաստական տվյալներ ձեռք չեն բերվել, միաժամանակ սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները⁵⁰,

- Առաջին աստիճանի դատարանը, քննարկելով Գ.Կարապետյանի և դիմողներ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի ներկայացուցիչ Ա.Չատինյանի բողոքները, այն մերժել է՝ նշելով, որ քրեական գործի շրջանակներում իրականացվել է արդյունավետ քննություն, քննչական և դատավարական գործողությունները քննիչի կողմից կատարվել են օրենքով սահմանված քրեադատավարական ընթացակարգին համապատասխան և կայացվել է օրինական և հիմնավոր որոշում⁵¹,

- Վերաքննիչ դատարանը, մերժելով Գ.Կարապետյանի և դիմողներ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի ներկայացուցիչ Ա.Չատինյանի վերաքննիչ բողոքները, արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն կատարելու պահանջները, գործով իրականացվել են մի շարք քննչական ու դատավարական գործողություններ՝ արդյունքում կայացնելով օրինական և հիմնավոր որոշում⁵²:

25. Նախորդ կետում շարադրված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 21-23-րդ կետերում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի նկատմամբ ենթադրյալ բռնություն կիրառելու դեպքերի առթիվ իրականացված քննության արդյունավետությունը գնահատելիս համակողմանի ուշադրության չեն արժանացրել գործի փաստական հանգամանքները: Մասնավորապես, Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչի համատեքստում ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն, որ՝

- նախաքննության մարմինը «լուրջ ջանքեր» չի գործադրել հայտնաբերելու և հարցաքննելու ենթադրյալ բռնության գործադրման ակնատես վկա՝ Գ.Կարապետյանին և Ա.Հակոբջանյանին ուղեկցող տաքսի ավտոմեքենայի վարորդին այն դեպքում, երբ վերջինիս հայտնած տվյալները կարող էին վճռորոշ նշանակություն ունենալ գործի էությունը համար: Հաշվի առնելով ենթադրյալ բռնության գործադրման դեպքերին նշված վկայի ակնատես լինելու հանգամանքը՝ վարույթն իրականացնող մարմինը պետք է հատուկ ջանասիրությամբ միջոցներ ձեռնարկեր նրանից գործի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Ունենալով տաքսու վարորդ՝ Նարեկ Բարխուդարյանի տվյալները և Ռուսաստանի Դաշնությունում վերջինիս գտնվելու մասին տեղեկություն, վարույթն իրականացնող մարմինը չի ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները, այդ թվում նաև՝ միջազգային իրավական օգնության շրջանակներում⁵³, այդ անձից գործի համար առանցքային նշանակություն ունեցող տվյալներ ձեռքբերելու ուղղությամբ: Նշված տվյալները նաև էական նշանակություն կարող էին ունենալ տուժողների և ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներում առկա հակասությունները հաղթահարելու համար: Հարկ է նկատել, որ նախաքննության մարմինը նույնիսկ միջոցներ չի ձեռնարկել տաքսի ավտոմեքենայի վարորդի՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձի հնարավոր ժամկետները պարզելու ուղղությամբ, այդ կապակցությամբ տեղեկություններ չի ստացել մերձավոր ազգականներից, ձեռք չի բերել նրա սահմանահատումների՝ գործին վերաբերելի ժամանակահատվածի ամբողջական պատմությունը, որը կարող էր օգտակար լինել Ն.Բարխուդարյանի գտնվելու վայրի մասին հնարավոր պատկերացում կազմելու համար,

- նախաքննության մարմինը պատշաճ ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ ծառայողական քննության ընթացքում Կ.Միմոնյանը և Ա.Իսրայելյանը նույնաբովանդակ բացատրություններ են տվել այն մասին, որ 2016 թվականի օգոստոսի 4-ի առավոտյան Ա.Հակոբջանյանին հրավիրել են ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժին, սակայն վերջինս առանց որևէ պատճառաբանության հրաժարվել է ներկայանալ վարույթն իրականացնող մարմին⁵⁴: Մինչդեռ, նշված փաստական տվյալի առկայության պայմաններում, այդ կապակցությամբ քննություն չի կատարվել, քննիչը կատարված նախաքննության ընթացքում այդ կապակցությամբ անհրաժեշտ հարցեր չի ուղղել Կ.Միմոնյանին և Ա.Իսրայելյանին⁵⁵,

- գողության դեպքով հարուցված քրեական գործով ընթացող նախաքննության պայմաններում, ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետը սեփական նախաձեռնությամբ դիմել է վարույթն իրականացնող մարմնին՝ ձերբակալվածներին պահելու վայր մուտք գործելու և Գ.Կարապետյանի հետ, ի թիվս այլնի, տվյալ գործով կատարված գողության դեպքի առնչությամբ «Օ՜ք բնույթի հարցազրույց» ունենալու թույլտվություն ստանալու համար, ինչը քննիչի կողմից թույլատրվել է⁵⁶: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նախնառաջ կրկնում է, որ նախաքննության ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումն օժանդակում է քննիչի դատավարական

գործունեությանը, երբ քրեադատավարական գործիքակազմը բավարար չէ քրեական հետապնդման խնդիրների արդյունավետ իրացման համար⁵⁷: Այսինքն՝ ընթացքի մեջ գտնվող նախաքննությանը զուգահեռ ոստիկանությունը սեփական նախաձեռնությամբ ինքնուրույն քննություն իրականացնել չի կարող, քանի դեռ քննիչի գործունեությանն օժանդակելու անհրաժեշտությունը չի հիմնավորվել քրեադատավարական համապատասխան ռեսուրսների սակավությամբ: Նշված անհրաժեշտությունը հիմնավորող տվյալների բացակայության դեպքում Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարում սկսված նախաքննության պայմաններում ոստիկանության աշխատակիցների կողմից միաժամանակյա քննության նախաձեռնումն ու իրականացումը: Ոստիկանությունը օրենսդրությամբ հստակ նախատեսված միջոցառումների շրջանակներում քննիչին կարող է օժանդակություն ցուցաբերել միայն նախաքննության իրականացման գործիքակազմի պակասի դեպքում, և երբ հանրային շահը պահանջում է գործի համար նշանակություն ունեցող առանձին հանգամանքների բացահայտման համար օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդների և միջոցների կիրառում⁵⁸:

Մինչդեռ տվյալ դեպքում, սկսված նախաքննության պայմաններում, ոստիկանության բաժնի պետը դիմել է քննիչին՝ ձերբակալվածի հետ «ՕՂ բնույթի հարցազրույց» անցկացնելու թույլտվություն ստանալու համար և ստացել այն, երբ ոստիկանության կողմից այդպիսի վերտառությամբ «հարցազրույց» վարելու լիազորությունը չի համապատասխանում օրենսդրությամբ նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակներին: Ավելին, հարկ է նկատել, որ ենթադրյալ հանցավոր դեպքի բացահայտված լինելու, ձերբակալված անձի առկայության պայմաններում առնվազն այդ նույն դեպքով քննիչի կողմից քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ անհրաժեշտ գործողությունների, այդ թվում՝ անձի իրավունքների լիարժեք երաշխավորմամբ հարցաքննության անցկացման հնարավորության բացակայությունը տվյալ դեպքում չի հիմնավորվել:

Նման պայմաններում, նկատի ունենալով նաև, որ միջազգային կառույցների կողմից նշվող՝ գործի քննության սկզբնական փուլում անձի խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու ռիսկի աստիճանը բարձր է, ոստիկանության աշխատակիցների վերը նկարագրված այցելությունը ձերբակալվածի մոտ և նրա նկատմամբ «ՕՂ բնույթի հարցազրույց» միջոցառման իրականացումը Վճռաբեկ դատարանի համար մտահոգիչ է՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ այցելության ժամանակաշրջանում ձերբակալվածն ունեցել է գանգատներ և բժշկական օգնության կարիք: Ուստի, նշվածը պետք է դառնար մանրամասն քննության առարկա և պարզվեր այդ միջոցառման նպատակը, բովանդակությունը, իրականացման ժամը, տևողությունը և այլ վերաբերելի հանգամանքներ, որոնք օբյեկտիվ դիտորդին համոզիչ կերպով հնարավորություն կընձեռնեին լիարժեք պատկերացում կազմել դրա վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նկատել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ քննություն չի իրականացվել նաև այդ հարցազրույցի արդյունքում կազմված արձանագրության առնչությամբ⁵⁹: Ավելին, պետք է փաստել, որ ոստիկանության աշխատակիցներ Ա.Ղազարյանը և Ս.Այվազյանը որպես վկա հարցաքննվելիս նշել են, որ ՁՊՎ-ում հարցեր են տվել ձերբակալված Գ.Կարապետյանին, մինչդեռ Ա.Ղազարյանի գրության համաձայն՝ Գ.Կարապետյանի նկատմամբ «Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» օպերատիվ հետախուզական միջոցառումն իրականացրել է միայն Ս.Այվազյանը⁶⁰, որպիսի հանգամանքը ևս քննության առարկա չի դարձվել:

- նախաքննության մարմնի կողմից մանրամասն քննություն չի տարվել նաև Գ.Կարապետյանի՝ ձերբակալվածների պահման վայրում գտնվելու ընթացքում մի քանի անգամ բժշկական օգնություն ստանալու հանգամանքների շուրջ, այն պարագայում, երբ ինչպես վերը նշվեց, Գ.Կարապետյանի՝ գանգատվելու առնվազն մեկ դեպքը հաջորդել է ոստիկանության աշխատակիցների այցին⁶¹: Այս առումով չեն կատարվել անհրաժեշտ գործողություններ, տեղեկություններ ձեռք չեն բերվել Գ.Կարապետյանի՝ ձերբակալվածների պահման վայրում գտնվելու ընթացքում նրան բժշկական օգնություն ցուցաբերած բժիշկներից, իրավաբանական օգնություն ցույց տված անձից, ինչպես նաև վերաբերելի ժամանակահատվածում Գ.Կարապետյանի հետ շփում ունեցած այլ անձանցից, ձերբակալվածների պահման վայրի վարչակազմի աշխատակիցներից, ովքեր կարող էին տեղեկություններ հայտնել Գ.Կարապետյանի առողջական վիճակի մասին,

- նախաքննության մարմնի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել անմիջապես մեկուսացնելու և հարցաքննելու ըստ ենթադրյալ գոհի՝ խոշտանգում կատարած կամ վատ վերաբերմունք դրսևորած ոստիկաններին: Արդյունքում, ոստիկանների կողմից իրենց ցուցմունքները միմյանց հետ համաձայնեցնելու հնարավորությունը նվազագույնի հասցնելու պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել: Ըստ գործի փաստական հանգամանքների՝ միևնույն վարչության ոստիկանության աշխատակիցները հիմնականում հարցաքննվել են տարբեր օրերի, ընդ որում՝ հարկ է նկատել, որ մոտ մեկ տասնյակ ոստիկանության աշխատակիցները 2017 թվականի մայիսի 2-ին քրեական գործ հարուցելուց հետո հարցաքննվել են շուրջ երկու ամսվա ընթացքում, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ խնդրահարույց է ինչպես գործի համար առանցքային նշանակություն ունեցող տվյալները հնարավորինս սեղմ ժամկետում ձեռքբերելու, այնպես էլ հարցաքննվող անձանց միջև հնարավոր համաձայնությունը բացառելու տեսանկյունից: Այս առումով սույն որոշման 23-րդ կետում վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramsahai and others v. Netherlands* գործով արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև առկա չեն ապացույցներ այն մասին, որ ոստիկանության ծառայողները միմյանց հետ համաձայնեցրել են իրենց ցուցմունքները, այնուամենայնիվ, հաշվի առնելով նաև ոստիկանության աշխատակիցների հարցաքննությունների միջև ընկած հարաբերականոթեն երկար ժամանակահատվածները, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նրանց միջև նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախնական քննության պատշաճության ապահովման

Էական թերություն,

- քրեական գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում նաև՝ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի նկատմամբ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցների կողմից բռնություն գործադրելու հանգամանքը պարզաբանելու, Ա.Հակոբջանյանի փաստացի բնակության հասցեն պարզելու և ՀՀ հատուկ քննչական ծառայություն ներկայանալ պարտավորեցնելու վերաբերյալ, նախաքննության մարմնի կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու հանձնարարություններ են տրվել ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներին, այդ թվում՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչությանը⁶²: Սույն որոշման 23-րդ կետում վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nalbandyan v. Armenia* գործով արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու առնչությամբ տարվող քննության անկախության ու անաչառության ապահովման տեսանկյունից անընդունելի էր անձին հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու հանձնարարություններ տալը ՀՀ ոստիկանության առնվազն նույն վարչությանը, որի աշխատակիցներին առնչվում էր քննվող գործը, այն է՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից խոշտանգում կատարելու և բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնական լիազորություններն անցնելու ենթադրյալ դեպքերին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև առկա չեն փաստական տվյալներ այն մասին, որ հանձնարարված օպերատիվ-հետախուզական միջոցառումները ոստիկանության աշխատակիցների կողմից կատարվել են անբարեխղճորեն և ոչ պատշաճ կարգով, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ քննվող քրեական գործն առնչվել է ոստիկանության աշխատակիցների շահերին, տվյալ պարագայում նրանց կողմից պատշաճ կերպով օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման պահանջն օբյեկտիվ դիտորդի տեսանկյունից ողջամտորեն ապահովված չի եղել: Այսինքն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու հանձնարարություններ տալիս չի ապահովվել դրանք կատարող մարմնի՝ տվյալ գործի նկատմամբ գերատեսչական հետաքրքրության բացակայությունը, կողմերից մեկի և օպերատիվ-հետախուզական միջոցառումները կատարող կառույցի շահերի համընկնման անթույլատրելիությունը⁶³: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ պարագայում անհրաժեշտ էր ապահովել նաև գործի քննության շրջանակներում հանձնարարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացնող մարմնի ինստիտուցիոնալ և գործառնությունն անկախությունն ու անաչառությունը:

26. Նախորդ կետում վկայակոչված հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրելու կասկացությամբ չեն ձեռնարկվել բոլոր ողջամիտ քայլերը, որոնք օբյեկտիվ դիտորդին համոզիչ կերպով հնարավորություն կընձեռեին լիարժեք պատկերացում կազմել դեպքի իրական հանգամանքների վերաբերյալ: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ տրված դատավարական խախտումների պայմաններում արդյունավետ քննություն չի իրականացվել, ինչը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել ստորադաս դատարանների կողմից: Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի հաղորդումների հիման վրա իրականացված քննությունը եղել է արդյունավետ, հիմնավոր չէ:

27. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտ կայացնելիս, ստորադաս դատարանները թույլ են տվել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական բաղադրիչի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ և 17-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Վերոշարադրյալը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու, դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի ու դիմող Գ.Կարապետյանի բողոքները բավարարելու և վարույթն իրականացնող մարմնին՝ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի իրավունքների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելու պարտականություն սահմանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Դիմողներ Ալբերտ Ավանի Հակոբջանյանի և Գագիկ Դավիթի Կարապետյանի ներկայացուցիչ Ա.Չատինյանի և դիմող Գ.Կարապետյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշումը բեկանել և փոփոխել: Դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի և դիմող Գ.Կարապետյանի բողոքը բավարարել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Ալբերտ Ավանի Հակոբջանյանի և Գագիկ Դավիթի Կարապետյանի իրավունքների խախտումները:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

- ¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 265-271:
- ² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 277-283:
- ³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 294-307:
- ⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 12-14:
- ⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 111:
- ⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 112:
- ⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 128:
- ⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 146-149:
- ⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 26-33:
- ¹⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 108-109:
- ¹¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 113:
- ¹² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 114-115, 122-123:
- ¹³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 20-25:
- ¹⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 116-118:
- ¹⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 10:
- ¹⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 190:
- ¹⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 105-106, 117, 119-123, 129-130:
- ¹⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 131-146:
- ¹⁹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 6-13:
- ²⁰ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 114-130:
- ²¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 58-71:
- ²² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Jeronovics v. Latvia* գործով 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, զանգատ թիվ 44898/10, կետ 103:
- ²³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Boicenco v. Moldova* գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, զանգատ թիվ 41088/05, կետ 123:
- ²⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nalbandyan v. Armenia* գործով 2015 թվականի մարտի 31-ի վճիռը, զանգատներ թիվ 9935/06, 23339/06, *Zalyan and others v. Armenia* գործով 2016 թվականի մարտի 17-ի վճիռը, զանգատներ թիվ 36894/04 և 3521/07, *Matevosyan v. Armenia* գործով 2017 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռը, զանգատ թիվ 52316/09 և այլն:
- ²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ նույն վճիռները:
- ²⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Գոռյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԱԲԴ/0049/01/09 որոշման 22-րդ կետը, Վարսագեղ Գասպարիի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԲԴ/0190/11/16 որոշման 19-րդ կետը:
- ²⁷ Նշված հատկանիշների մասին տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վարսագեղ Գասպարիի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԲԴ/0190/11/16 որոշման 19-րդ կետում:
- ²⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի՝ 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, զանգատ թիվ 21594/93, կետեր 91-92, *Mehmet Emin Yuksel v. Turkey* գործով 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռը, զանգատ թիվ 40154/98, կետ 37, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, կետեր 83-84:
- ²⁹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikheev v. Russia* գործով 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, զանգատ թիվ 77617/01, կետ 109:
- ³⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hugh Jordan v. the UK* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, զանգատ թիվ 24746/94, կետեր 125-130, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, զանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136, *Amine Guzel v. Turkey* գործով 2013 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, զանգատ թիվ 41844/09, կետ 39:
- ³¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, զանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 134:
- ³² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, զանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 137, *mutatis mutandis*, *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, զանգատ թիվ 21594/93, կետ 92, *Ognyanova and Choban v. Bulgaria* գործով 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռը, զանգատ թիվ 46317/99, կետ 107, *Khadzhaliyev and Others v. Russia* գործով 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, զանգատ թիվ 3013/04, կետ 106:
- ³³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, զանգատ թիվ 24760/94, կետ 103, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, զանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136:
- ³⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tanrkulu v. Turkey* գործով Մեծ պալատի 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, զանգատ թիվ 23763/94, կետ 104, *Gul v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, զանգատ թիվ 22676/93, կետ 89:
- ³⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Boicenco v. Moldova* գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, զանգատ թիվ 41088/05, կետ 123:
- ³⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վարսագեղ Գասպարիի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԲԴ/0190/11/16 որոշման 23-25-րդ կետերը:
- ³⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի՝ 2017 թվականի գործունեության վերաբերյալ 2018 թվականի զեկույցը, ինչպես նաև 2018 թվականի գործունեության վերաբերյալ 2019 թվականի զեկույցը:
- ³⁸ Տե՛ս Preventing police torture and other forms of ill-treatment – reflections on good practices and emerging approaches, 28th General Report of the CPT, CPT/Inf(2019)9-part, April 26, 2019, կետ 64:

³⁹ Տե՛ս Committee against Torture, Concluding observations on the fourth periodic report of Armenia, CAT/C/ARM/CO/4, Adopted by the Committee at its fifty-ninth session (7 November-7 December 2016), կետ 17:

⁴⁰ Տե՛ս Committee against Torture, Concluding observations on the fourth periodic report of Armenia, կետ 18:

⁴¹ Տեղեկությունների ամբողջություն է, որոնք ստացվում են բժշկական հետազոտության ընթացքում հենց հետազոտվողի կամ նրա հարազատների հարցման արդյունքում:

⁴² Տե՛ս, mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետեր 176-177:

⁴³ Տե՛ս, mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Mushegh Saghatelian v. Armenia գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 206, Zalyan and others v. Armenia գործով նշված վճիռը, կետ 269:

⁴⁴ Տե՛ս, mutatis mutandis, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ramsahai and others v. Netherlands գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99, կետ 330:

⁴⁵ Տե՛ս Committee against Torture, Concluding observations on the fourth periodic report of Armenia, կետ 12:

⁴⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Zalyan and others v. Armenia գործով նշված վճիռը, կետ 268:

⁴⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Zalyan and others v. Armenia գործով նշված վճիռը, կետ 269:

⁴⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Nalbandyan v. Armenia գործով նշված վճիռը, կետեր 120 և 123:

⁴⁹ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

⁵⁰ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

⁵¹ Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

⁵² Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

⁵³ Տե՛ս, mutatis mutandis, Արտուշ Դուլյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏՂ2/0037/01/15 որոշումը, կետ 21:

⁵⁴ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

⁵⁵ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁵⁶ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁵⁷ Տե՛ս Գոռ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԿԳ/0229/01/16 որոշումը, կետ 17.1:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում:

⁵⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁶⁰ Տե՛ս սույն որոշման 8-8.1-րդ կետերը:

⁶¹ Տե՛ս սույն որոշման 9-9~~1~~2-րդ կետերը:

⁶² Տե՛ս սույն որոշման 10-10~~1~~1-րդ, 10~~1~~4-րդ կետերը:

⁶³ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Հրաչյա Ներսիսյանի և Էդգար Ամիրյանի գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏՂ2/0005/01/16 որոշումը, կետ 20:

**Նախագահող՝
Դատավորներ՝**

**Լ. Թադևոսյան
Հ. Ասատրյան
Մ. Ավետիսյան
Ե. Դանիելյան
Ա. Պողոսյան
Ս. Օհանյան**

Պաշտոնական հրապարակման օրը՝ 1 սեպտեմբերի 2020 թվական: